Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները տարրական դպրոցում:
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Թամարա Աբրահամյան Համազասպի Դասվար +37498565834 tamaraabrahamyan94@gmail.com Երրորդ դասարան
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Քաղցրաշենի Ս. Գևորգյանի անվան միջն. դպրոց (ՊՈԱԿ) kakhtsrashen@schools.am https://qaghcrashen.schoolsite.am/

Բովանդակություն

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հարց-Ներառական կրթության ի՞նչ առանձնահատկություններ և դժվարություններ կան տարրական դպրոցում Քաղցրաձեռի միջնակարգ դպրոցի օրինակով:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լրացնել միայն սովորողների մասնակցությամբ հետազոտությունների պարագայում
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Փաստաթղթերի վերլուծության և դիտարկման մեթոդները,որակական մեթոդներ
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	Օգոստոսի 24-ից մինչև Սեպտ. 15-ը

Վիճակագրական վերլուծությունները վկայում են, որ աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամությամբ մոտ կես միլիոն մարդ: Այդ անձիք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական,այնպես էլ սոցիական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից եւ հնարավորություն չեն տալիս ակտիվորեն մասնակցելու իրենց երկրի զարգացմանը:Այդ ներուժն ուղղորդելու եւ իրացնելու բանալին մարդկանց մտածելակերպում է: Վիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը եւ սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների նկատմամբ: Ամբողջ աշխարհում այսօր դպրոց չհաճախող մոտ 140 մլն. երեխա կա,որոնց մեծ մասը հաշմանդամ է:

Ներառական կրթությունը հենվում է բոլոր երեխաների,այդ թվում նաեւ զարգացման հատուկ պայմանների կարիք ունեցողների կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է երեխաների բազմազան կարիքներին, օժանդակում ուսումնական մշակութային կյանքին բոլոր երեխաների մասնակցությանը:

Ներառական կրթությունը ենթադրում է փոփոխություններ եւ բարեփոխուներ կրթության բովանդակության մեջ մոտեցումներում եւ մեթոդներում:Այն տարածվում է համապատասխան

տարիքային խմբի բոլոր երեխաների վրա:Ընդունելի են երեխաների տարբերությունները տարիքը, սեռը, ծագումը,լեզուն,զարգացման խնդիրները,անհատական առանձնահատկությունները,ընտանիքի սոցիալական կարգավիճակը եւ այլն:

Այն նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի իրականացմանն ու կազմակերպմանը:

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>արտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	
Հետազոտության ընթացքը	

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները եւ առկա դժվարությունները

Ներառումը ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթությունը, տարիների ընթացքում ուսումնասիրելով հաշմանդամ երեխաների եւ սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքները, կանգնել է որոշակի հարթության վրա:

Հաշմանդամությունը չի կարող արգելք հանդիսանալ մարդու կրթություն ստանալու իրավունքի վրա: Ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու միտում: Երեխաները սովորում են տարբեր արագությամբ, յուրաքանչյուր երեխա ինքնին յուրատիպ է, ուստի ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացը ճիշտ ապահովելու համար: Եվ բոլորովին պարտադիր չէ, որ բոլոր ուսուցիչներն ունենան հատուկ մանկավարժական կրթություն պարզապես հարկավոր է իրականացնել հասկանալի, մատչելի դասավանդում եւ, ամենակարևորը՝ դրսևորել համբերատարություն: Սա այն է, ինչ պահանջվում է բոլոր ուսուցիչներից՝ բոլոր երեխաների նկատմամբ (այդ թվում նաեւ կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող)՝ նրանց համար որակյալ կրթություն ապահովելու նկատառմամբ:

Ներառումը կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում եւ չմեկուսանալ ընտանիքներից: Ներառական կրթության հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում է հավասար հնարավորությունն եր կրթական

հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար եւս:

Ներառական կրթությունը որդեգրում է երեխայակենտրոն մեթոդաբանություն, համաձայն որի՝ բոլոր երեխաներն ուսումնական տարբեր պահանջմունքներով անհատականություններ են:

Ներառումը մոտեցում է, որի դեպքում հաշվի է առնվում աշակերտների բազմազանությունը, այդ ժամանակ ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցվում են նրանց ընդունակություններին ու պահանջմունքներին: Այդ գործընթացում կարեւոր է ուսուցիչների ու հատուկ մանկավարժների դերը, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով:

Ներառական կրթությունը նպաստում է ավելի շատ երեխաների ընդգրկմանը հանրակրթության համակարգ, ինչից շահում է նաեւ հասարակությունը:

Մեր հասարակությունը, ցավոք, դեռ պատրաստ չէ իր կողքին տեսնել եւ ընդունել հատուկ կարիքներով մարդու, կարծրատիպը կոտրված չէ.

Հաշմանդամ մարդիկ խիստ զգայուն են իրենց բնութագրող բառերի նկատմամբ: Ցավոք, մեր հասարակության զգալի զանգվածը չի տիրապետում խոսքի էթիկային: Անհրաժեշտ

է օգտագործել այնպիսի բառեր, որոնք «չեզոք» են եւ չեն վիրավորում հաշմանդամ մարդուն:

- «հաշմանդամ» բառի հականիշը «ոչ հաշմանդամն է » (ոչ թե հաշմանդամ – նորմալ կամ հաշմանդամ - առողջ),
- մանկուց հաշմանդամ (ոչ թե բնածին արատ),
- հաշմանդամ մարդիկ (ոչ թե հաշմանդամներ),
- հատուկ կարիքներով մարդ,
- տեսողական կամ լսողական խնդրիներ ունեցող մարդ,
- անվասայլակ օգտագործող մարդ (ոչ թե անվասայլակին գամված),
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Հարկավոր է խուսափել այնպիսի բառերից ու արտահայտություններից, ինչպիսին են

- հիվանդ, անկարող, խեղված, խեղանդամ, անդամալույծ, ոչ լիարժեք, ոչ նորմալ, - հիվանդության զոհ, խեղճ, անբախտ:

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ դպրոցներն ընդգրկվում են ներառական դպրոցների շարքը: Սա կարեւոր նշանակություն ունեցող իրադարձություն է, որն ուրախացնում է եւ ծնողներին, եւ հատկապես՝ մանկավարժներին:

Հատուկ կարիքներ ունեցող երեխաները, անջատվելով հասարակությունից ու դպրոցից, դարձել էին բարձիթողի: Ոչ բոլորն

ունեին հնարավորություն՝ իրենց զավակներին այլ քաղաք ուսանել տանելու: Սոցիալապես անապահով ընտանիքներնընդունել էին իրենց անզորության կարգավիճակը: Նրանք ցանկանում էին օգնել իրենց երեխաներին, բայց չգիտեին՝ ինչպես:

Ներառական կրթությունը հնարավորություն տվեց լուծելու որոշ սոցիալական խնդիրներ, ինչպիսիք են՝ տրանսպորտը, երեխայի կանոնավոր դպրոց հաճախելը, համայնքային առօրյայում ներգրավվածությունը, ժամանակի ռացիոնալ օգտագործումը, համայնքի ծնողների փոխադարձ կապը եւ այլն:

Ներառական կրթության վերաբերյալ թյուր պատկերացումներն ամրապնդվել էին ծնողների մոտ: Ենթադրվում էր, որ ներառական կրթության դեպքում, բոլոր այն աշակերտները, ովքեր ունեն ինչ-որ առանձնահատուկ կարիքներ, չեն կարողանա հաղթահարել ուսումնական գործընթացը եւ կունենան խնդիրներ: Բնավ այդպես չէ: Ներառական մոտեցում նշանակում է, որ ուսուցիչներն անհատական աջակցություն են ցույց տալիս բոլոր աշակերտներին, եւ աշակերտների որոշ խմբեր բաժանված չեն մյուսներց:

Մանկավարժներն ավելի լավ կհարմարվեն երեխաների հետաքրքրություններին ու կարիքներն, եթե ունենան ճկուն

դասացուցակ, ծնողների հետ անհատական աշխատանք, կազմակերպել համատեղ արտադասարանական գործունեություն: Մտավախություն կար, որ նմանատիպ երեխաները համադասարանցիների կողմից ծաղրանքի
կենթարկվեն:Ո՛չ:Հետազոտությունները ցույց տվեցին, որ
Ընդհակառակը, փոքրերն ավելի հանդուրժող ու աջակցող են,քան մեծահասակները: Տեսնում ենք, թե ինչպիսի հոգատարությամբ են շրջապատում իրենց նոր ընկերներին օգնում են թեքահարթակներից օգտվել, տեսողության խնդիրներ ունեցողներին ուղեկցում են ձեռքից բռնած: Այս ընկերական մոտեցումն օգնում է նրանց ճիշտ ընկալել շրջապատի բազմազանությունը: Ենթադրվում էր, որ այն ժամանակ, երբ ուսուցիչը կզբաղվի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներով, մյուս աշակերտները կշեղվեն, եւ նրանց քիչ ժամանակ կհատկացվի: Մտահոգությունն անտեղի է, քանի որ ցանկացած ուսուցիչ կփաստի, որ, այսպես թե այնպես, դասարանում իրականացվում է շերտավորված ուսուցում, եւ յուրաքանչյուրն աչքի է ընկնում իր ընդունակությունների տարբերությամբ: Բազմազանությունը ստիպում է մանկավարժներին՝ փնտրելու աշակերտների նկատմամբ անհատական մոտեցման ձեւեր:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որեւէ փոփոխության ներմուծել յուրանքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի եւ իրագործի սեփական գաղափարները: Մանկավարժը պետք է հավատա ուսումնական գործընթացի հաջողությանը:

Բոլոր աշակերտներից՝ անկախ նրանց առանձնահատկություններց, պետք է բարձր ակնկալիքներ ունենալ:
Մենք՝ ուսուցիչներս, լինելու ենք հետեւողական, համբերատար եւ հարգանքով ենք վերաբերվելու յուրաքանչյուր երեխայի ուսուցման անհատական ոճին: Նման մոտեցում դրսեւորելով մենք կունենանք դրական արդյունքներ:
Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու եւ սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր

հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով: Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր: 2001 թվականից «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, դանիական «Առաքելություն Արեւելք» միջազգային կազմակերպության եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներն իրականացնում են ներառական կրթություն:

Արժեւորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն եւ որակ: Հետեւաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց:

Ե՛վ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, եւ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է

հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը: Դա հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային պարտադրաբար ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը եւ նրան ներառելով հանրակրթական ուսումնական հաստատություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետեւյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության եւ պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական եւ այլ ծառայություններից՝ անկախ նրանց

ընտրած ուսումնական հաստատության տիպից,

- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից եւ հասարակությունից նրա առանձնացման:

Այս իմաստով հատուկ հանրակրթական համակարգում ընթացող բարեփոխումներն առաջնահերթ են: 2007 թ. ստեղծվել է Երեւանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը: Զարգացումները գնահատման կենտրոնի առաջ մարտահրավերներ, այն է՝ երեխայի կրթական կարիքների գնահատում՝ դրեցին նոր արդյունավետ կրթության կազմակերպման նպատակով: Անհրաժեշտ է մշակել նոր չափանիշներ՝ հիմնված երեխայի ֆունկցիոնալ կարիքների վրա: Այդ պարագայում երեխայի անհատական ուսումնական պլաններն էլ կմշակվեն երեխայի իրական կրթական կարիքների գնահատման արդյունքում եւ կնպաստեն երեխայի զարգացմանը:

ՀՀ Ազգային ժողովը ընդունել է օրենքի նախագիծ, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը եւ հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաեւ՝ հաշմանդամություն եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային եւ համայնքային կյանքին եւ նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին ներառյալ հաշմանդամություն եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ եւ չքավոր երեխաներ, լեզվական

փոքրամասնություններ, ազգային
փոքրամասնություններ,
հակամարտությունների հետեւանքով
որբացած երեխաներ եւ
այլն:
Ներառումը հաշմանդամություն եւ կրթության
առանձնահատուկ պայմանների կարիք
նեցող երեխաներին հնարավորություն է
տալիս կրթություն ստանալ իրենց
համայնքներում եւ չմեկուսանալ
ընտանիքներից: Համայնքից եւ ընտանիքից
հեռու՝ հատակ դպրոցներում երեխաներին
տեղավորելը հակասում է ընտանիքի եւ
համայնքի կյանքին մասնակցության նրանց
իրավունքին: Ընտանիքից ու համայնքից
հաշմանդամություն եւ կրթության
առանձնահատուկ պայմանների կարիք
ունեցող երեխաների բաժանումը հաճախ
վկայում է հասարակության մեջ նման
մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող
նախապաշարումների մասին: Ներառական
կրթությունը կարող է բարձրացնել կրթության
որակը բոլորի համար: Ներառական
կրթությունը կարող է կրթական
պրակտիկայում փոփոխությունների
կատալիզատոր հանդիսանալ, որը
կհանգեցնի կրթության որակի
բարձրացմանը: Հաշմանդամություն եւ
Կրթության առանձնահատուկ պայմանների
կարիք ունեցող երեխաների ներառումը
հանրակրթական դպրոցներ կստիպի

ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման եւ ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի եւ մատչելի դասավանդում, որը եւ նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով եւ տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաեւ՝ կրթական գործընթացից դուրս մնացած եւ ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Ներառական կրթության համակարգի զարգացումը, բոլոր աշակերտների լիարժեք մասնակցությունը, հավասար հնարավորությունների ստեղծումը եւ անհատական մոտեցումները:

- Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին եւ կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միեւույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք:
- Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին եւ կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ

գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:

- Մարդիկ տարբեր են, դա բնական է եւ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, եւ հետեւաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաեւ դպրոցում:
  Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ եւ, իհարկե, անհատական մոտեցում:
- Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան եւ ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելուհամար:
- Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ եւ գիտակից աշխատեն՝ ներառական կրթության նպատակներին հասնելու համար:

Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն եւ մասնակցություն: Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում:

- Թէ ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող 1 կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:
- Կարեւորն այն է, որ ախտորոշումը, որն ընդգծում էր աշակերտի թերությունները, այլեւս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել եւ ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա

սովորել եւ ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը եւ կարողությունները.

- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական - որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է եւ վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք էստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների եւ հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ: Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ:

Բացի վերը նշված երեք հիմնաքարերից, շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր

աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարեւոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն եւ հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման եւ իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության եւ համագործակցության միջավայր, եւ բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է:

Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին

- Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ոս կարիքներին համապատասխան: Սկզբունքորեն այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում եւ պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի եւ պետության պատասխանատվության տակ է:
- Ցավոք, բազմաթիվ երեխաներ դեռեւս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական

համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների եւ հասարակության կողմից: Հատուկ դպրոցները չեն կարող այս հարցի լուծում հանդիսանալ: Շատ փոքր է այն երեխաների թիվը, որոնց կարելի է առաջարկել, որ սովորեն հատուկ դպրոցներում: Հատուկ դպրոցները չեն կարող առանձնացված ծառայություններ լինել, դրանք պետք է շատ ակտիվ դերակատարություն ունենան դպրոցների զարգացման գործընթացում՝ որպես հանրակրթական դպրոցներին աջակցություն մատուցող ծառայությունների կենտրոններ:

- Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաեւ հատուկ նյութերի եւ սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որեւէ երեխայի դպրոցում սովորելու համար:
- Հատուկ հանրակրթական դպրոցների միջեւ առկա պատնեշը տարիների ընթացքում աստիճանաբար կկորցնի իր արդիականությունը դպրոցական համակարգի համար, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կստանձնի իր կարեւոր դերը բոլոր երեխաներին

անհրաժեշտ ծառայություններ մատուցելու նպատակով: Մասնագիտական տեսանկյունից դա կապահովի դասավանդման որակի բարելավում, երբ տարբեր բնագավառների մանկավարժների փորձառությունն ու մոտեցումները հնարավոր կլինի ինտեգրել:

- Աշակերտի եւ նրա կրթության համար արդեն պատասխանատվություն կկրի հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Ռեսուրս-ուսուցիչների առկայությունը չի ենթադրի, որ նրանք կարող են ստանձնել այդ պարտականությունը հանրակրթական դպրոցի ուսուցչի փոխարեն:
- Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատու կլինի, որ դպրոցի ծրագրերն ու դպրոցը մատչելի լինեն բոլոր երեխաների համար, հաշվի առնեն երեխաների կարիքները, պարբերաբար վերամշակվեն, իրականանան եւ գնահատվեն: Նման ծրագրերի եւ դրանց գնահատման արդյունքները կխթանեն դասավանդման նոր մոտեցումներ եւ ծրագրեր: Այն փաստը, որ ուսուցիչները համատեղ ուժերով, համատեղ քննարկմամբ կառաջարկեն մեթոդներ ու լուծումներ դասավանդման կոնկրետ խնդրի հաղթահարման, կոնկրետ

աշակերտի կարիքներին համապատասխան ուսուցումը կազմակերպելու համար, կարեւոր մաս կկազմի դասավանդման որակը բարելավելու գործընթացում:

- Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում, ընտանիքի մասնակցությունը համարվում է անփոխարինելի պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ըեւտանիքի անդամները կարող են կարեւոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն եւ հավատ ներշնչվի, եւ ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու եւ ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում:
- Ամբողջ կրթության նպատակը պետք է ուղղված լինի անհատի կարիքներին, եւ շատ կարեւոր է, որպեսզի գնահատման ռազմավարությունը մշակված լինի առաջընթացի գնահատումը խթանելու նպատակով: Գնահատումը պետք է ուղղված լինի

դրական զարգացումները բացահայտելուն:

Բաց եւ ճկուն ուսումնական ծրագրերը կարեւոր են դպրոցների զարգացման համար

- Շատ կարեւոր է, որ ուսումնական ծրագրերը լինեն բավարար չափով ճկուն եւ ուսուցիչներին տրվի դրանք երեխաների անհատական կարիքներին համապատասխանեցնելու, լուծումներ գտնելու հնարավորություն, որպեսզի յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին եւ կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցումը պետք է խթանի եւ ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը:
- Հանրահայտ ճշմարտություն է, որ մարդիկ տարբեր են, սակայն դա միշտ անտեսվում է ուսումնական ծրագիր կազմելիս, երբ ենթադրվում է, որ բոլոր երեխաները՝ պետք է կարողանան նույն բանը սովորել, նույն գործիքներով ու նույն մեթոդներով: Բոլոր երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող եւ օժտված երեխաների համար շատ կարեւոր է, որ ուսումնական ծրագիրը հստակ նպատակներ սահմանի նրանց կրթության համար, իսկ ուսուցիչներն

ազատ լինեն, ընտրելու այն ուղիներն ու մեթոդները, որով նրանք կապահովեն այդ նպատակներին հասնելը:

- Դպրոցներին պետք է աջակցություն ցուցաբերվի որոշակի առարկաների կամ ուսուցման մեթոդների փոփոխության հարցում եւ այդ աջակցությունը պետք է զուգորդվի համապատասխան հմտությունների զարգացման հետ:

Հետազոտություն Քաղցրաշենի միջնակարգ դպրոցում

Կրթության առանձնահատուկ պայման ունեցող երեխայի համար կազմվում է անհատական ուսուցման պլան և դրա մեջ գրվում է նրա հետ անցկացվող պարապմունքների ժամաքանակը և տևողությունը:Դրվում է նպատակ և ըստ նպատակի իրականացվում են այդ պարապմունքները:
Յուրաքանչյուր մասնագետ ունի իր էջը, իր հատվածը, որտեղ լրացնում է,
բացի դպրոցի ուսուցիչներից,որոնք պարզեցնում են ԿԱՊԿ սովորողի առարկայական ծրագրերը:

1.	ՍՈՎՈՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐ	
1.1	Ազգանուն, անուն, հայրանուն	

1.2	Ծննդյան վայր	Արարատի մարզ գյուղ Քաղցրաշեն,
1.3	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	18.10.2010թ.
1.4	Սեռը	արական
1.5	Քաղաքացիությունը	ՀՀ
1.6	Բնակության հասցեն	գյուղ Քաղցրաշեն, փ. Պ. Դուրյան տ.5
1.7	Ուսումնական հաստատություն	Արարատի մարզ Քաղցրաշենի Ս. Գեւորգյանի անվան միջնակարգ դպրոց
1.8	Դասարանը (նշել ուսումնական տարին)	6-րդ դասարան 2022-2023 ուստարի
1.9	Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները	
1.10	Արտակարգ իրավիճակների դեպքում կապի միջոց աշխատանքային եւ բնակարանի հեռախոսահամարներ	
2.	ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	

2.1	Հաշմանդամություն	ունի
	Սահմանվել է «հաշմանդամ երեխա» կարգավիճակ 2 տարի ժամկետով:	

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	**Աջակցության աստիճան**
Խոսքի եւ լեզվի	**2-րդ**
Հաղորդակցման	
Լսողության	
Տեսողության	**2-րդ**
Ինտելեկտի (մտավոր)	**2-րդ**
Հուզական Վարքի	
Շարժունակության	**2-րդ**

Սովորողի նկարագիր

Երեխան 11 տարեկան է: Ապրում է ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղում: Ընտանիքը բաղկացած է 5 անձից՝ հայրը, մայրը, 2 քույրերը եւ ինքը:Երեխան ունի հաշմանդամության կարգ: Ունի տեսողական խնդիրներ եւ զուգամիտվող շլություն: Մայրն

ակնկալում է, որ աշխատանքի արդյունքում կբարելավվի երեխայի մտավոր իմացության մակարդակը եւ կզարգանա մանր շարժունակությունը:
Մանկավարժահոգեբանական գնահատման արդյունքում նրա ակտիվության եւ մասնակցության վերաբերյալ ստացած տեղեկատվության ամփոփումից հետո արձանագրվել են խնդիրներ հետեւյալ ոլորտներում՝ Սովորել եւ գիտելիքը կիրառել) «Ընդհանուր առաջադրանքնեչ եւ պահանջներ), Հաղորդակցություն
.
«Շարժունակություն), «Ինքնասպասարկում: Կյանքի հիմնական բնագավառներ», «Համայնքային, սոցիալական եւ քաղաքացիական կյանք)
Նրա իմացական ոլորտը չի համապատասխանում տարիքային զարգացման չափանիշներին : Երեխան ընկալում է պարզ բովանդակության նյութը, երբ այն մի քանի անգամ կրկնում կամ պարգեցնում են: Որեւէ նյութ հաղորդելիս անհրաժեշտ է կապ ստեղծել նախկինում ձեռք բերված գիտելիքների հետ, որպեսգի տեղեկատվությունը մտապահվի եւ ամրապնդվի: Մտածողության տեմպը դանդաղ է, նոր տեղեկատվություն հաղորդելու համար պետք է այն մի քանի անգամ կրկնել, իսկ առաջադրանքները կատարելիս տրամադրել հավելյալ ժամանակ:

Հասկանում է իրադարձությունների պատճառահետեւանքային կապերը: Կարողանում է ընտրություն կատարել, որոշումներ կայացնել պարզ իրավիճակներում: Դասապրոցեսին պասսիվ է, սակայն ուսուցչի կողմից տրված հարցերին փորձում է պատասխանել իր կարողությունների սահմանում: Տարածական եւ ժամանակային պատկերացումները զարգացած են մասամբ, տարբերում է տարվա եղանակները, շաբաթվա օրերը, սակայն ամիսները շփոթում է: Կարողանում է կատարել արտագրություն, սակայն թելադրության ժամանակ անհրաժեշտ է ուսուցչի անմիջական հսկողություն, պետք է թելադրել տառ առ տառ, հաճախ մոռանում է կամ շփոթում է տառերը: Կարդալիս ունի դժվարություններ, կարդում է միայն իրեն ծանոթ կամ միավանկ պարզ բառերը, տեսողական խնդիրների պատճառով շփոթում է իրար նման տառերը (Ռ_Ո, Մ_Ս, Ց_3): Մաթեմատիկական կարողությունները չեն համապատասխանում տարիքային չափանիշներին: Ճանաչում է թվերը, հաշվում է 50_ի սահմանում, կատարում է պարզ մաթեմատիկական գործողություններ, չի հիշում բազմապատկման աղյուսակը, դժվարանում է կատարել կարգային անցումով մաթեմատիկական գործողություններ:

Ուշադրությունը կարողանում է կենտրոնացնել կատարված գործողության վրա, բայց շուտ հոգնում է, սկսած աշխատանքն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է մեծահասակի ուղղորդում: Հիշում է մարդկանց, իրադարձություններն ու վայրերը, սակայն դժվարությամբ է մտապահում եւ վերարտադրում ուսումնական նյութը, հիմնականում տեսողական հիշողությունն է զարգացած: Հազվադեպ է պլանավորում առօրյա գրաֆիկը: Երեխան կոնֆլիկտային չէ, ակտիվության մակարդակը ցածր է: Հետեւում է տանը եւ դպրոցում սահմանված կանոններին, վերահսկում է վարքը: Որոշ իրավիճակներում ունենում է կաշկանդվածություն եւ լարվածություն: Ինքնավստահ չէ, , սակայն խրախուսանքի ու գովեստի դեպքում ոգեւորվում է, ավելի արդյունավետ է շարունակում աշխատանքը: Խոսքն օգտագործում է որպես հաղորդակցման միջոց, նկատվում է արագախոսություն, որի պատճառով բառերում կատարում է աղավաղումներ: Մտքերը շարահյուսորեն ճիշտ չի ձեւակերպում: Բառապաշարը սահմանափակ է: Որոշ հնչյուններ արտաբերելիս ունենում է դժվարություններ՝ ռ ն փոխարինում է . ով կամ ղ ով, որոշ հնչյուններ առանձին արտասանում է, սակայն բառամիջում կամ

բառավերջում փոխարինում է այլ հնչյունով կամ բաց է թողնում:
Երեխայի ընդհանուր շարժունակությունը զարգացած է մասամբ: Ազատ տեղաշարժվում, սակայն վազելիս հավասարակշռությունը պահելիս ունենում է դժվարություններ, սատիճաններից իջնելու կամ բարձրանալու ժամանակ օգտվում է աստիճանավանդակից: Դժվարանում է կատարել այնպիսի գործողություններ, որոնք պահանջում են ձեռքի եւ մատների նուրբ շարժումներ չի կարողանում կոճկել կոճակները, կապել քուղերը, հագնել կոշիկները: Մանր շարժունակությունը անհրաժեշտ է զարգացնել:

Ինքնասպասարկման հմտությունները զարգացած են մասամբ: Երեխան լկարողանում է լվացվել, ուտել, սակայն անձնական հիգիենային հետեւելիս, հագնվելիս, լոգանք ընդունելիս անհրաժեշտ է մեծահասակի աջակցությունը:
Կենցաղային աշխատանքներում օգնում է մայրիկին ըստ ցանկության: Գնում է խանութ, սակայն նախօրոք տրվում է սահմանված գումար եւ ցուցակ:
Տրանսպորտային միջոցներից օգտվում է մեծահասակի հսկողությամբ:
Մեծահասակների եւ հասակակիցների հետ շփման նախաձեռնություն է ցուցաբերում

ընտրողաբար: Համադասարանցիների հետ
ունի լավ հարաբերություններ, ընդունված եւ
սիրված է նրանց կողմից: Նասնակցում է
խոսակցությանն այն դեպքում , երբ
դիմացինը նախաձեռնում է շփումը,
հարցերին տալիս է պարզ պատասխաններ:
Անծանոթ միջավայրում հարմարվելիս
ունենում է որոշակի դժվարություններ:
Համայնքային գործունեությունում երեխան
ունի մասնակցություն մեծահասակի
ուղեկցությամբ, մասնակցում է տանը,
դպրոցում եւ համայնքում կազմակերպվող
խմբային աշխատանքներին,
միջոցառումներին կամ խաղերին, երբեմն
սահմանված կանենների պահպանման
համար պետք է մասնագետի
միջամտությունը, կանոնների պարզեցում:
Երեխան սիրում է կառուցողական խաղեր
խաղալ, նկարել եւ մուլտֆիլմ դիտել:
Նպատակահարմար է երեխայի կրթությունը
շարունակել անհատական ուսուցման պլանի
հիման վրա առարկայական ծրագրերի
հարմարեցմամբ եւ պարզեցմամբ, ինչպես
նաեւ՝ տրամադրել հատուկ մանկավարժի,
լոգոպեդի եւ ֆիզիոթերապիստի
ծառայություններ:

Սովորողին, նրա մանկավարժներին և ծնողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պլանավորում

Ուսումնական հաստատության մակարդակի ծառայություններ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՄԱՆԿԱՎԱՐԺ	ԾՆՈՂ	ՍՈՎՈՐՈՂ
Ուսուցման և ուսումնառության մատչելիության , գործընթացի մատչելիության և ներառականության և արդյունավետության ապահովում		Լինել հետևողական դպրոցի հանձնարարված առաջադրանքնե ր կատարմանը : Չանել ոչինչ իր փոխարեն: Հետևել , երեխայի սննդակարգին և շարժին : Հետևել , որ երեխան կրի ակնոց :	Կրել ակնոց : Կատարել հանձնարարված առաջադրանքները: Մարզվել
Խելամիտ հարմարեցումների ապահովում	Կիրառել բազմաթիվ և բազմաբնույթ դիսակտիկ նյութեր: Քանոն Հաշվիր սարք Տեսանյութեր	Ակնոց Հաշվիչ Քանոն	Ակնոց Հաշվիչ Քանոն
Երկարօրյա ուսուցման պլանավորում և իրականացում	Դպրոցը երկարօրյա ուսուցում չի իրականացնում		

3.2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Աջակցություն /դասընթացներ,խորհրդատ-վություն,մասնագիտական, մեթոդական աջակցություն և այլն/			
Լոգոպեդ	Դասապրոցեսի ընթացքում երեխային տրամադրել պարզ խոսքային նյութ Կիրառել շատ դիդակտիկ նյութեր Բառային և հնչյունային թելադրություն	Հետևել,որ երեխան տանը կատարի հանձրարարվա արտաբերական վարժությունները Ճիշտ արտաբերի հնչյունները	Կատարել հանձնարարված առաջադրանքները

Սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գրաֆիկ

հատուկ մանկավարժական ծառայություն	Տևողություն	Ծավալներ	Ծառայությունների տրամադրամն գրաֆիկ
լոգոպեդ	90րոպե	2-րդ աստիճան-հաճախակի աջակցություն/միջին/	Երեքշաբթի 16:10-16:55 Հինգշաբթի 16:55-17:35 Ուրբաթ 15:30- 16:00
օլիգոֆրենոմանկավարժ	90րոպե	2-րդ աստիճան-հաճախակի աջակցություն/միջին/	Ուրբաթ 13:40-14:25

Սովորողի երկարաժամկետ՝ տարեկան նպատակներն ըստ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հատուկ մանկավարժական ծառայություն

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:
Լոգոպեդ Մերի Մարգարյան

Տարեկան նպատակ	**Կարճաժամկետ նպատակներ**	**Ուսումնա - մեթոդական աջակցություն , միջավայրային հարմարեցումներ , աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ**	**Ժամկետ**	**Արդյունք**

1. Տարեվերջին կարողանում է ճիշտ արտաբերել ր , ռ , լ , վ , ֆ հնչյունները :	• Կարողանում է որոշակի դժվարությամբ կատարել լեզվի և շուրթերի վարժանքներ: • Կարողանում է կատարել շնչառական վարժություններ:Ճիշտ է արտաբերում լ հնչյունը:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Հայելի	21.10.2022 թ	4
	• Կարողանում է կատարել լեզվի և շուրթերի վարժանքներ նմանակումով:Կարողանում է որոշակի դժվարությամբ լեզուն և շուրթերը մի դիրքից փոխել մյուսին:Ճիշտ է արտաբերում լ , ր հնչյունները:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Հայելի	23.12.2022 թ	4
	• Կարողանում է որոշակի դժվարությամբ, նմանակումով լեզուն բերել պահանջվող հնչյունի դիրքի և վերարտադրել ր , լ , ռ հնչյունները :	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Հայելի	24.02.2023 2	
	• Կարողանում է ճիշտ արտաբերել ռ , ր , լ, ֆ , վ հնչյունները : Կատարում է ամրապնդման աշխատանքներ:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Հայելի	22.05.2023 2	

	• Կարողանում է տրված միավանկ բառերը կարդալ ,գրել , գտնել բառում պահանջվող տառը:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Բառային և վանկային քարտեր • Սյուժետային նկարներ	22.10.2022 թ	4
	• Կարողանում է վանկերը միացնելով ստանալ երկվանկ բառեր , վանկատել երկվանկ բառերը, երկու երկվանկ բառերից պահանջվող վանկերով կազմել բառեր և կարդալ:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Բառային և վանկային քարտեր • Սյուժետային նկարներ	23.12.2022 թ	4
	• Կարողանում է բառը համադրելով պատկերի հետ՝ լրացնել բաց թողնված տառերը , կարողանում է կարդալ բազմավանկ բառեր:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Բառային և վանկային քարտեր • Սյուժետային նկարներ	24.02.2023 թ	
	• Կարողանում է կարդալ և գրել բառային թելադրություն, կարդալ պարզ նախադասություններ՝ համադրելով սյուժետային նկարի հետ:	• Անհատական աշխատանք • Նմանակման մեթոդ • Քարտիկների , նկարների կիրառում • Խաղային մեթոդ • Բառային և վանկային քարտեր • Սյուժետային նկարներ	22.05.2023 թ	

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	
Այլ տեղեկատվություն	

Ցավոք հայաստանյան ոչ բոլոր դպրոցներում են հարմարեցված կրթության հատուկ պայմաններ ունեցող սովորողների կարիքներին:Մեր երկիրը դեռ շատ անելիքներ ունի կրթության որակի բարձրացման գործում: Սակայն, անկախ ամեն ինչից ներառական կրթությունը նպաստում է հասարակութ-
յան բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ եւ ստեղծագործական հնարավորություններ,որոնք անցյալում անհնար էին: Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում,որն արդեն ունի

ներառական կրթության փորձը եւ այն դարձրել է պետական քաղաքականության կարեւոր մասը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ծրագիրը նպաստում է այս խնդրով երեխաների լիարժեք ներգրավմանը՝ թե ուսումնական պրոցեսում եւ թե հետագայում կան հասարակության մեջ:Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, Ինչպես նաեւ աղքատ ընտանիքներին եւ մեծահասակներին ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայել նախապաշարումներին,օգնում նրանց դուրս գալ ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինել ավելի ինքնավստահ, կառուցել սեփական ապագան եւ դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Ներառական կրթությունը ենթադրում է ներգրավում , բանակցություն, հոգատարություն,ուսուցում, ունակություններ փոխըմբռնում,փոխանցում բանականություն, հաղթանակներ,ակտիվություն,վճռականություն, լավատեսություն,մշակութայինբազմազանություն, կատարելագործում, գեղեցիկ հասարակություն:

‘

Օգտագործված գրականության ցանկ

1. Օրենսդրություն https://hmk.am/orensdrutyun-hy/
2. Ներառական կրթության ռազմավարություններ
3. https://innostud.am/application/library/4b0d3123.pdf
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

5. https://ekho.am/inclusive/

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ